

ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԹՈՒՄԱՆՅԱՆՐ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հովհաննես Թումանյանի գիտակցական ողջ կյանքը եղել է անմնացորդ նվիրում սփոփանքի լարեկամության գաղափարին, նրանց մշակույթի ու գրականության մերձեցման գործին: Հարևան ժողովուրդներից նա ամենից շատ կապված էր Վրաստանի ու վրաց ժողովրդի հետ: «Ես իբրև բանաստեղծ մարդ անհունորեն սեր տածելով առհասարակ դեպի ժողովուրդները, առանձնապես ուժեղ սիրելի մեր եղբայրակից վրաց ժողովրդին»¹, — խոստովանել է Թումանյանը: Նույնը շեշտում է նաև մեկ ուրիշ նամակում: «Էն անսահման սերը, որ ունեմ դեպի ժողովուրդները ե դեպի Վրաստանը առանձնապես»²:

«Թումանյանը և Վրաստանը» թեման բազմիցս քննության նյութ է դարձել Ու. Հայ և թե՛ վրաց գրականագիտության մեջ: Բայց դեռևս գիտական շրջանառության մեջ չեն դրվել այդ թեմային վերաբերող մի քանի հոգվածներ ու նամակներ, որոնք վերաբերում են Հայ-վրացական հարաբերություններին: Այս առումով ուղադրության արժանի են Հովհաննես Թումանյանի «Պետք է պարզ ասել», «Վերջին տեղատվություն», «Ի՞նչ կարող է անել Վրաստանը» հոգվածները, Ռամիշվիլուն, Ժորդանիային, Գեգեչկորուն ուղղված նամակները, հարուստ, հետաքրքիր փաստական նյութ, որը սփռված է ժամանակի պարբերական մամուլում և պահվում է արխիվներում:

«Ի՞նչ կարող է անել Վրաստանը» հոգվածում Թումանյանը պատմական հարուստ նյութի է ժամանակակից քաղաքական կյանքի վերլուծության հիման վրա ներկայացնում է հեղափոխական իրադրությունը, ժողովրդական ընդվզ-զումները Անդրկովկասում: «Կովկասյան Ֆրանսիայի» կամ «Կովկասյան Համ-լետի» դժվարին դերը Թումանյանը հատկացնում էր Վրաստանին՝ նրա հետ կապելով իր լուսավոր հույսերը: «Ասում եմ վրացիները, հայերը և մուսուլ-մանները, քանի որ այդպիսի կարգով են կանգնած նրանք ռուսական հեղա-փոխական շարժման մեջ», — գրում է Թումանյանը³: Դարասկզբի հեղափո-խական պայքարում հայերին դասելով երկրորդը վրացիներից հետո՝ Թուման-յանը դա բացատրում էր նրանով, որ Հայկական հարցը մի կողմից, հայ-մու-սուլմանական ընդհարումները մյուս կողմից՝ շեղում էին հայերին հեղափո-խական պայքարից: «...Վրացիներն ու մուսուլմանները Անդրկովկասում գրա-վել են երկու ծայրերը, իսկ հայերը գտնվում են նրանց մեջտեղում»:

Մի կողմից ստեղծվել է սոցիալ-հեղափոխական կապ վրացիների հետ, մյուս կողմից մտել է նեղ ազգայնական-ցեղային ընդհարման մեջ մուսուլ-մանական էլեմենտի հետ:

Եվ այն ժամանակ, երբ վրացիների մեջ շարժմանը տոն տվողը սոցիա-լիզմն էր, թաթարների մեջ այդ տոնը տալիս էր մուսուլմանությունը, հայերի մեջ հայկական արյունոտ հարցը Հայաստանի մասին, որը միախառնվելով սոցիալիզմի հետ, արդեն վերածվել էր ազգային ողբերգական դրամայի»⁴:

¹ Հովհաննես Թումանյան. Երկերի ժողովածու 6 հատորով. հ. 5, Երևան. 1945, էջ 453 (այսուհետև Թումանյանի երկերից արվող մեջբերումները, որոնք նույն հրատարակու-թյունից են, կհղվեն տեքստում: Փակագծերում կնշվեն հատորն ու էջը):

² «Борьба», Тифлис, 28 ноября 1919.

³ Հիշատակության արժանի են հատկապես բանաստեղծի դուստր նվաղ Թումանյանի և գրականագետ Տիգրան Կարապետյանի ուսումնասիրությունները:

⁴ «Республика», Тифлис, 11 марта 1918.

⁵ Նույն տեղում:

Թումանյանը վրաց ժողովրդի բազմադարյան պատմությունից բերում է հետաքրքիր փաստարկներ՝ ընդգծելու վրացու ազատասիրական ոգու վաղեմությունը: Նրա կարծիքով, ցարական Ռուսաստանի հալածանքները ազգային-մշակութային կյանքի ոլորտում ծառայել են վրաց ժողովրդի ազգային պայքարի ոգու ուժեղացմանը: Հիշատակելով Վրաստանի ազգային-ազատագրական կռիվները, Թումանյանը շեշտում էր, որ վրացին միշտ էլ հանդես է եկել իրեն ակտիվ, ընդվզող քաղաքացի, իր պահանջներում՝ հետևողական և համարձակ: Հատկապես բարձր է գնահատում 1857—58 թթ. շարժումը, որը ուներ ժողովրդական-գյուղացիական բնույթ և ուղղված էր իշխանական-ազնորականական խավի դեմ: Շարժման ղեկավարը դարբին էր: Նա առաջ էր քաշել բոլոր մարդկանց հավասարության և եղբայրության գաղափարները:

Թումանյանը լավ գիտեր Կովկասի բոլոր ժողովուրդների պատմությունը (նրա բնակարանում մի ամբողջ պահարան հատկացված է կովկասագիտական գրքերին), բայց ամենից ավելի լավ գիտեր վրաց ժողովրդի պատմությունը: Ավելին, Թումանյանը հավաքել է նաև Վրաստանի պատմությանը վերաբերող փաստաթղթեր ու պատմական վավերագրեր, ամենայն բացառությամբ ուսումնասիրել է դրանք, կատարել բանասիրական պլեր-պլետումներ:

Նրբ ցարի հրամանով Կովկասի պետական գյուղացիները վերածվում էին կալվածատիրական գյուղացիների, Անդրկովկասի որոշ շրջաններում՝ Ղարաբաղում, Ղազախում, Շամախիում, Բորչալովում և Շուշավերում բարձրացան ժողովրդական խռովություններ: Այդ պայքարը իզուր չանցավ: Շուշավերը, օրինակ, մի երջանիկ բացառությամբ ստացավ որոշ զիջումներ, բայց վերոհիշյալ բոլոր շարժումները ճնշվեցին ռուսական զենքի և դատարանների միջոցով: Այս մասին ռուսերեն ձեռագիր վավերագիրը բանաստեղծը ձեռք էր բերել Թիֆլիսում 1915 թ.: Ձեռագրի հեղինակի անձը (Լ. Իսարով) և պաշտոնը (ազնվական և իշխանական տոհմերի գործերը քննող հանձնաժողովի անդամ, 1845-ից Թիֆլիսի գավառապետի օգնական) պարզելուց հետո, 1922 թ. Թումանյանը, թարգմանելով այն, հանձնում է դատերը՝ նվարդ Թումանյանին, խորհուրդ տալով հրատարակել էջմիածնի «Բանբեր» ամսագրում: Նվարդ Թումանյանը վավերագիրը հրատարակեց միայն 1931 թ. «Նոր ուղի» ամսագրում՝ իր առաջարկում մեկ անգամ ևս վկայելով, թե որքան շատ է Թումանյանին հետաքրքրել վրաց ժողովրդի ազգային հեղափոխական պայքարի պատմությունը առհասարակ⁶:

1905—1906 թթ. շարժման մեջ Թումանյանը առաջամարտիկը դարձյալ համարում էր վրացիներին, որոնք ոտքի էին ելել նույնիսկ զորքերի դեմ՝ առաջացնելով ցարական կառավարության զայրույթը: «Այս բոլորը պարզ ցույց է տալիս,—եզրակացնում է Թումանյանը,—ինչպիսի լուսավոր դեր է վիճակված խաղալու կովկասյան Ֆրանսիային—Վրաստանին, ինչպիսի լուսավոր հույսեր կարելի է կապել նրա հետ...»:

Հայ-վրացական հարաբերությունների մասին խոսելիս, Թումանյանը ելնում էր ժողովուրդների դարավոր փորձից: Գրողը խոստովանում է, որ ամեն անգամ հրճվանքով է վերադառնում հայ և վրաց ժողովուրդների դարավոր, անօրինակ լավ հարաբերությանը: Իր «Վերջին տեղատվություն» հոդվածը Թումանյանը սկսում է այսպես. «Ազգերի հարևանությունների մեջ դժվար կարելի է գտնել ավելի լավ հարևաններ, քան եղել են հայն ու վրացին: Պատմության մեջ հայտնի չի հայ-վրացական պատերազմ»⁷: Թումանյանը ներկայացնում է Ասիայի և Կովկասի ազգագրական քարտեզը՝ հարավից ու արևելքից համատարած մահմեդական ծովում ընդամենը կան հայերով բնակեցված կղզյակներ, իսկ Վրաստանը կազմում է ավելի բարձր ու մեծ մի կղզի: Պատմական համառոտ ակնարկով Թումանյանը փորձում է բացատրել, թե ինչպես է առաջացել այդ քարտեզը, ինչպես են հայերն ու վրացիները միշտ

⁶ «Նոր ուղի» (ամսագիր), Երևան, 1931, № 6, էջ 133:

⁷ «Республика», 11 марта 1918.

⁸ «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 14 նոյեմբերի 1918:

միասին պայքարել մահմեդական ռազմազան հորդանքների դեմ: Առաջին հարվածը իր վրա միշտ կրում էր Հայաստանը և մի տեսակ վահան հանդիսանում Վրաստանի համար, իսկ Վրաստանն էլ միշտ ընդունում և ապաստան էր տալիս և դեռնի ու ռարրարոսություն սարսափներից Վրաստանի ճանապարհը բռնած հայ գաղթականներին: Երկու դրացի քրիստոնյա ժողովուրդների համար միշտ էլ դժբախտությունն ու ցավը ընդհանուր է եղել, միշտ էլ նրանք փոխադարձաբար օգնել են իրար և միասին են դիմագրավել ընդհանուր թշնամուն: Թումանյանը բազմաթիվ փաստեր է բերում պատմությունից՝ ապացուցելու հայ և վրաց ժողովուրդների բախտակից լինելը, սկսած խաչակրաց արշավանքի, Դավիթ և Աշոտ թագավորների, Թամար թագուհու տիրապետության շրջանից, ներառյալ մինչև Ռուսաստանին միավորվելը: Այս հարցին Թումանյանը անդրադարձել էր դեռևս խաչատուր Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպին նվիրված իր ուսումնասիրության մեջ, ուր որոշակի ընդգծում է, որ «հայերն ու վրացիները դարերի փորձով տեսան, որ փոքր է, տկար է ու անկարող՝ շրջապատող այլակրոն ու բարբարոս ցեղերի դեմ, և մի հզոր ձեռք է հարկավոր էս բարբարոսական հեղեղի դեմ» (6, 261), և երկուսն էլ գրեթե միաժամանակ ապավինեցին Ռուսաստանին, ինչպես որ միաժամանակ ստեղծել էին իրենց դրերը, միաժամանակ պայքարել միևնույն թշնամիների դեմ, «միասին են տառապել, միասին պայքարել իրենց ապագայի համար» (4, 421):

1918 թ., նրա հրահրվեցին հայ-վրացական ընդհարումները, Թումանյանը վրդովված ու վշտացած սկսեց հանդես գալ թե՛ իր գեղարվեստական գործերով ու հրապարակախոսական հոդվածներով և թե՛ իր կոնկրետ գործողություններով՝ ուղղված ազգամիջյան վեճերի դադարեցմանը:

Դալիս և մ ևս Վրաստանի
Զքնաղ ոգուն երկրպագու,
Քրոջը վեհ ու գեղանի
Քրոջն արի հայի հոգու:

Թումանյանը վստահ էր, որ ցարական Ռուսաստանի բյուրոկրատիան էր հրահրել թշնամանքը անդրկովկասյան ժողովուրդների միջև, որպեսզի բաժան-բաժան անի և շեղի նրանց ուշադրությունը հեղափոխական պայքարից: Բայց և այնպես նա համոզված էր, որ «անկարելի է հայ-վրացական ժողովուրդների ընդհարումը գլուխ բերել» (4, 421): Տեղի ունեցած տխուր միջադեպերը Թումանյանը անվանում էր ընդամենը ցավալի թյուրիմացություն. «Թշնամությունը, որ ստեղծված է մեր ժողովուրդների մեջ, — ասում էր նա, — արհեստական է, իսկ սերն ու եղբայրության զգացմունքը բնական ու շատ ավելի ուժեղ, քան թե կարծում են մեզանում» (5, 417): Թումանյանը իր հրապարակախոսական ելույթներում բազմիցս կրկնել է, որ այն հայ գործիչը, որը չի պաշտպանում Վրաստանին, չի հասկանում իր ժողովրդին ու իր պատմությունը, և այն վրացին, որը չի պաշտպանում հային ու Հայաստանը, չի հասկանում վրաց ժողովրդին և Վրաստանի պատմական ճանապարհը. «էնպես որ, — հայտարարում է բանաստեղծը, — հայ թե վրաց պատմության մեջ լավագույն վրացին պաշտպանում է Հայաստանին, հայը՝ Վրաստանին» (4, 422):

Պատմության իմացությամբ զինված ազգերը, հատկապես հայն ու վրացին, չեն կարող իրար հետ չլինել, չեն կարող միասին չլինել, որովհետև, ինչպես նկատում է Թումանյանը, «ժողովուրդները շատ բան կարող են մոռանալ, բայց իրենց պատմությունը, իրենց կուլտուրան չեն կարող մոռանալ» (6, 238): Տիգրան Տաբիձին գրած իր պատասխանում, մեղադրելով «վայ քաղաքական գործիչներին», «ընտրական քվեատուհիներից» ծնված ղեկավարներին, գրում է, որ նրանք «եթե հարկավոր են համարում, հարաջ են գցում, աղաղակով ու աղմուկով հավաքում են մարդկանց, հարբեցնում մի որևէ սուտով, մի որևէ լուգունգով, ժողովուրդից ստեղծում են ամբոխ... ու տանում են էն տեսակ գործերի, որոնց նա, ժողովուրդը, արդար աշխատանքով ապրող մարդը չէր գնալ

երբեք իր արդար կամքով ու խղճմտանքով: Եվ ահա Հովհ. Թումանյանը գրում է իր հոգևածներից ևս մեկը՝ «Պետք է պարզ ասել», որը մենք գտել ենք նվարդ Թումանյանի արխիվում, և առայժմ ստույգ չենք կարող ասել, թե ժամանակին, մամուլի էջերում այն հրատարակվե՞լ է, թե ոչ: Հրապարակախոսական այս ելույթը ուղղված էր հայերի և վրացիների միջև ցավալի թյուրիմացության բացահայտմանը և երկու եղբայր ժողովուրդների միջև բարեդրացիական հարաբերությունների պաշտպանմանը: Իսկ երկպառակության համար առիթը գտնում և ստեղծում են ղեկավարող շրջանները, որոնց անմիջական գիտությունը ու հաճախ նաև թելադրանքով ստահող լուրեր են տաագրվում մամուլի տարբեր օրգաններում, որոնք անտեղի կրքեր են բորբոքում. «Օրերս,—գրում է Թումանյանը,—հաղորդում հայտնվեց մամուլում. թե Հայաստանին միավորվում է Բաթումի մարզը: Այդ անհեթեթ ու չհիմնավորված լուրը գնալով ընդունում էր լուրջ բնույթ և անհանգստացնում՝ որոշ վրացական շրջանների: Զանազան պարբերականների էջերում անմիջապես հայտնվում են կեղծ լրատվության արձագանքներ և ինչ-որ մեկի հորինած լուրը դիտում ու ներկայացնում իբրև հայ ժողովրդի պահանջ. «Եվ մենք մինչև այժմ չենք հասկանում, որտեղից առաջացավ այդ լուրը, և ովքե՞ր են այդ հայերը, որոնք պահանջում են Բաթումի մարզը»:

Մինչև այժմ չկա պաշտոնական հերքում և այդ բոլորը պարզ է: Մեր շուրջը իշխում է բյուրոկրատական խավարը: Կարծես ոչինչ չի փոխվել: Լուծության մատենելու նույն ննացած ձևը:

Հայ ժողովրդի անունից ասում են իբրև հայ ժողովուրդը պահանջում է, դատում են ու մեղադրում հայ ժողովրդին, իսկ հայ ժողովուրդը այս ամենի մասին գաղափար էլ չունի»:

«Ինչ Բաթում, ինչ Բաթումի մարզ—ինչ միավորում Հայաստանի հետ:

Անհնար է, որ Հայաստանի կողմից լինի այդպիսի պահանջ: Բաթումի մարզը երբեք չի եղել հայկական և չի կարող լինել այդպիսին»:

Թումանյանը մեղադրում էր Հայաստանի կառավարությանը այն բանի համար, որ նա անտարբերությամբ էր անցնում մամուլում հրատարակվող ստահող լուրերի կողքով և չէր փորձում պաշտոնական հերքում տալ կամ պարզ ասել, որ վրաց ժողովուրդը հարևան երկրներից ոչ մի կողմից ոչինչ չի խլել և չի սեփականացրել և ոչինչ չունի վերադարձնելու. «Պետք է մեկընդմիջ համաձայնել այդ ճշմարտության հետ և պարզ ասել»—գրում է Թումանյանը⁹:

Վրաց թերթերում տպագրված ստահող լուրերից էր նաև այն, իբր Դրոն, նշանակվելով հայ զորքերի հրամանատար, կարող է նորից մի կռիվ առաջ բերել Վրաստանի հետ: Այս լուրը ևս սոսկալի ազդում է Թումանյանի վրա, և նա գրչին է հանձնում իր հրապարակախոսության փայլուն էջերից մեկը՝ «Մոտիկ հարևանը և հեռու բարեկամը»: Այս առիթով նա նորից անդրադառնում է պետությունների և ժողովուրդների հարևանության հարցերին: Նա առանձնացնում է կառավարող շրջանները ժողովրդից, որովհետև նրանց չափերը հաճախ էին հակադրվել, և ի տարբերություն արվեստագետների ու մշակույթի առաջադեմ գործիչների, որոնք միշտ ժողովրդի հետ են. կառավարողները հաճախ իրենց իսկ ժողովուրդների դեմ են եղել: «Իմ կարծիքով,—ասում է Թումանյանը,—սուտ է, որ ասում են՝ ամեն մի կառավարություն արժանի է իր ժողովրդին: Ընդհակառակը—առհասարակ կառավարությունները արժանի չեն իրենց ժողովուրդներին, և շատ քիչ կառավարություն կարող է լինել, որ արժանի լինի իր ժողովրդին և լինի իր ժողովրդի հետ»¹⁰:

Ընդ որում, վատ կառավարողներն ու իշխողները երբեք չեն կարող հենվել ժողովուրդների վրա, նրանց հենարանը ընդամենը կարող է լինել ամբոխը, որովհետև «ժողովուրդն իմաստուն է, ամբոխը՝ հիմար, ժողովուրդը ծանր է, ամբոխը՝ թեթև: Ժողովուրդը մեծահոգի է ու բարի, ամբոխը՝ դուրապագրի, ու

⁹ Թումանյանի թանգարան, նվարդ Թումանյանի արխիվ, րաժին 6/1, թղթապահակ 12, էջ 21:

¹⁰ Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ. հ. 2, Երևան, 1969, էջ 403:

վտանգավոր ու չար (ժողովուրդը աշխատանք է սիրում—ամբոխը՝ թալան): Ժողովուրդը խաղաղասեր է—ամբոխը կռավարար: Եվ ամբոխամիտ ու ամբոխավար մարդիկ երբեմն ամբոխի գլուխն անցնելով, որ մի հեշտ բան է, տիրում են ժողովրդին ու նրան գցում զանազան կոռիվների մեջ, որ նա չի էլ երազում:

Թումանյանը Հայաստանի կառավարությանը մեղադրում էր նաև այն բանի համար, որ առանց բարոյագիտական նայելու իր հույսը դնում է հեռավոր երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ամերիկայի վրա: Հեռու բարեկամների օգնությունն ու համակրանքի մասին խոսելիս հայերը հիշատակում են Կյաղստոնի կրակոտ ճառերը, իսկ հայ բաղաձայնները գիտեն և մի բանի ֆրանսիացիների ու այլ եվրոպացիների համակրական խոսքերը: Սակայն առաջ-քան ու ավելի մարդկանց ճառերը որքան էլ կրակոտ լինեն, էական ու իրական օգնություն չեն կարող ցույց տալ հայ ժողովրդին: Բանաստեղծը, իհարկե, չէր կարող մոռանալ կամ ուրանալ հեռվից եկած օգնությունը. «Միակ մեծ օգնությունը,—ասում էր նա,—որ տեսել է հայ ժողովուրդը իր հեռու բարեկամներից,—դա ամերիկյան ժողովրդի օգնությունն էր»: Արձանագրելով իրողությունը՝ Թումանյանը, սակայն, ամենևին էլ այն կարծիքին չէր, որ հանուն հեռուների հետ բարեկամության կարելի է թշնամանալ դրացիների հետ: «Մինչդեռ սրան բոլորովին հակառակ,—ասում է նա,—ժողովրդական իմաստությունն ասում է. «Մոտիկ հարևանը լավ է, բան հեռու բարեկամը»¹²:

Այս հղումով մասնակի կրճատումներով խորհրդային տարիներին առաջին անգամ հրատարակվել էր 1943 թ. մարտին, «Սովետական դրականություն» ամսագրում: Նվարդ Թումանյանը, առայժմ անտիպ իր հուշերում պատմում է, թե ինչպես է Վարպետը՝ Իսահակյանը, հիացել Թումանյանի այդ ելույթով. «Կյոթն ասացիր, հայրիկդ միտս ընկավ,—ասել է Իսահակյանը նվարդին,—հայրիկդ էն հողվածը կարդացի «Մոտիկ հարևանը...», հանճարեղ մտքեր է հայտնել: Տաս անգամ Օհանեսը աչքիս բարձրացավ ու նորից կարդացի»¹³:

Թումանյանի խոսքը, անշուշտ, մեծ ուժ ուներ, բայց նա պայքարում էր ոչ միայն դրշով: 1918—20 թթ., կորցրած իր հոգեկան խաղաղությունը, Թումանյանը կոնկրետ գործերով իր եռանդուն մասնակցությունն էր բերում հայ-վրացական հարաբերությունների ամրապնդման գործին: Նա մեծ հեղինակություն էր վայելում Վրաստանի կառավարող շրջաններում և ձգտում էր օգտագործել այդ: Անձամբ հանդիպելով վրաց կառավարության արտաքին գործերի նախարար Եվդենի Գեգեչկորուն ու այլ ղեկավար անձանց, Թումանյանը փորձում էր նրանց հետ համաձայնության գալ, գտնել ստեղծված դրությունից դուրս գալու ելքը: Նա իշխան Իլյա Նակաշիձեի միջոցով Վրաստանի լուսավորության մինիստր Գեորգի Լասխիլաշվիլուն էր հանձնել նախապատրաստվող խորհրդակցության բանաձևը, որի կիրառումն ապահովելու և այն արագացնելու համար Թումանյանը անձամբ է դիմում Լասխիլաշվիլուն: Գեգեչկորուն նա առաջարկում է հրավիրել հայ և վրաց մտավորականների արտակարգ խորհրդակցություն՝ կազմելու հաշտության նոր նախագիծ այն պայմանների հիման վրա, որը ներկայացրել էր արտաքին գործոց նախարարը իրենց անձնական հանդիպման ժամանակ (5, 435): Ավելի ուշ, իր ծննդյան 50-ամյակի առթիվ ստացած շնորհավորական նամակներին պատասխանելով, Թումանյանը Վրաստանի ղեկավարներին խորհուրդ էր տալիս առաջնորդվել միայն ժողովուրդների միջև սեր ու բարեկամություն հաստատելու գաղափարով. «Հին կառավարությունները կարծում էին,—ասվում է Գեգեչկորուն ուղղված նամակում,—թե իրենց ժողովուրդների երջանկության համար պետք էր հարևանների երկրները տիրել: Ժամանակն ու փորձը ցույց տվեց, որ ժողո-

11) Նույն տեղում, էջ 403—404:

12) Նույն տեղում:

13) Թումանյանի թանգարան, Նվարդ Թումանյանի արխիվ:

վուրդների Երջանկության համար ոչ թե հարևանների հողերը պետք է տիրել, այլ նրանց սրտերին:

Նվ մենք այլևս ուրիշ տեսակ հերոս չենք ուզում տեսնել. եթե ոչ միայն սրտերի տիրող և ուրիշ տեսակ իշխանություն չենք ուզում, եթե ոչ միայն եղբայրություն, արդարություն և սիրո հաղթանակ:

Վրաստանի ներքին գործերի մինիստր Ն. Ռամիշվիլուն ուղղած նամակում (1919 թ. մարտ) Թումանյանը հայտնում է իր մեծ ուրախությունը այդ հաղթանակի նկատմամբ նրա ունեցած հավատի համար. «Մանավանդ,— ասում է Թումանյանը,— որ Դուք ինձ նման բանաստեղծ չեք. այլև մինիստր եք, որ կարող եք Ձեր լավ զգացմունքները իրագործել»:

Ժողովուրդների համերաշխության մեջ էր Թումանյանը տեսնում ժափանակի իմաստությունը և բոլոր ազգերի Երջանկության գաղտնիքը:

Նույնատիպ բովանդակություն ունի նաև Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ժորդանիային ուղղած նամակը, որ բանաստեղծը խոստովանում է, որ ժողովուրդների հանդեպ ունեցած իր սերը հավատի անսպառ աղբյուր է իր համար: Այս երեք նամակներն էլ առայժմ մնում են «Борьба» թերթի էջերում¹⁴:

Թիֆլիսի քաղաքային դուման դիմել էր Թումանյանին, խնդրելով լուրջունել Թիֆլիսի պատվավոր հաշտարար դատարանի անդամությունը¹⁵, 1919 թ. մարտի 17-ին, վրաց ակումբի շենքում տեղի էր ունենալու գրական դատ. «Հանցավոր» է արդյոք Հայաստանը Վրաստանի հանդեպ, թե ոչ» թեմայով: Դատին մասնակցելու էին հայ և վրաց գործիչներ: Դատախազն էր Օնիաշվիլին, դատապաշտպաններն էին Արշակ Զոհրաբյանն ու Արամայիս Սրգսկյանը: Իսկ Թումանյանը Շիրվանզադեի, Լևոն Քալանթարի, Մարկոս Դուխանյանի, Տիգրան Փիրումյանի, Տիգրան Նազարյանի և այլոց հետ միասին ևրդրվյալ ատենակալների մեջ էր¹⁶:

Հարևան ազգերի համերաշխության ամրապնդման գործում Թումանյանը որոշ հույսեր էր կապում Անդրկովկասյան կոնֆերանսի հետ, որը բացվեց Թիֆլիսում 1919 թ. ապրիլի 25-ին: Թումանյանի նախագահած Հայ գրողների կովկասյան ընկերությունը հեռագիր ուղարկեց կոնֆերանսին: Նրանում մասնավորապես ասվում էր. «Հայ գրողների ընկերությունը համակված ազգերի ազատության, համերաշխության և խաղաղ կուլտուրական զարգացման տենչով, սրտագին ողջունում է կովկասյան հանրապետությունների առաջին հանդիպումը և ցանկանում, որ դա հիմնովի լինի կովկասյան եղբայր ժողովուրդների հանդիպումը ամենքի Երջանկության համար»¹⁷: Թումանյանը նույն բովանդակությամբ հեռագիր է ուղարկում կոնֆերանսին նաև անձամբ իր ստորագրությամբ: Մեկ այլ ընկերության՝ Հայ հայրենակցական միությունների միության անունից և իբրև նրա նախագահ՝ հայտնում է իր անհողող հավատը, որ կոնֆերանսի արդյունավետ աշխատանքներում կգրվեն համերաշխության ու եղբայրության գաղափարները¹⁸, իբրև այդ միության նախագահ, Թումանյանը նաև իր տանը արտակարգ ժողով է հրավիրում հայ-վրացական հարաբերությունները քննարկելու և երկու ազգերի միջև բարեկամության ամրապնդման ուղղությամբ ընդհանուր քանքերով գործունեություն ծավալելու նպատակով: Հայ գրողների ընկերության անունից 1919 թ. մայիսին նա շնորհավորում է Վրաստանի անկախության տարեդարձը¹⁹:

Թումանյանի նախաձեռնությամբ, Թիֆլիսում ապրող տարրեր ազգերի մտավորականների քանքերով մի քանի շրջաններում խորհրդակցություններ անցկացնելուց հետո որոշվեց ստեղծել կովկասյան ազգերի կուլտուրական

14 Տե՛ս «Борьба», 23 июня 1919.

15 «Հառաջ» («Աշխատավոր»), Թիֆլիս, 7 մարտի 1919.

16 «Մշակ», Թիֆլիս, 14 մարտի 1919.

17 «Աշխատավոր» («Հառաջ»), 26 ապրիլի 1919.

18 Նույն տեղում:

19 Նույն տեղում, 28 մայիսի 1919.

միությունը, ինչ որում, մինչև այդ նպատակին հասնելը, իբրև առաջին քայլ, նախ ստեղծվում է Հայ-վրացական մշակութային հաստատություն²⁰։

1919 թ. Թումանյանը, շարունակելով զանազան նյութերի, հուշերի ու վավերագրերի ձևորեն ման աշխատանքները, որոշում է կազմել անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության մասին հատուկ ժողովածու։ Այս գործով Թումանյանը ուղղում էր վերստին անդրադառնալ այն հարցին, որ ազգամիջյան թշնամություն սերմանողը միայն կառավարող շրջաններն են, իսկ ժողովուրդները կապված են միմյանց հետ միմիայն սիրով, այդ պատճառով էլ ժողովուրդները որոշումներն ու քայլերը ավելի արժեք ունեն, քան նրանց կառավարությունները. «Կառավարությունները ժամանակավոր են ու փոփոխելի. ժողովուրդները մշտական ու անփոփոխ» (4, 425)։

Այդ ժողովածուն կաղմնու. և հրատարակելու ցանկությունը ևս, ինչպես բանասեր զոհի շատ ու շատ այլ ծրագրեր, մնաց անկատար։

Աղգրքի համերաշխությանը նպաստող կարևոր գործոններից է գրականության ու արվեստի, ազգային մշակութային փոխանցման ու շփումի միջոցով «Ազգերին լավ ճանաչելու և նրանց մեջ փոխադարձ սեր ու հարգանք արթնացնելու ավելի ազնիվ հող ու ավելի մեծ կապ չի կարող լինել, քան գրականությունն է, որի մեջ հանդես են գալիս նրանց լավագույն զգացմունքները, նրանց ազգային հանճարն ու ոգին» (4, 462),—այս խոսքերով է Թումանյանը ներկայացնում գրականագետ Մ. Մուկուկիձին, որին նա հրավիրել էր հայ մտավորականության առջև վրաց գրականության մասին դասախոսություն կարդալու։ Այդ օրվա իր բացման խոսքում Թումանյանը դնում էր հայ և վրաց ժողովուրդների միջև սեր ու հարգանք առաջացնելու պահանջը։ Նա «մի վերին աստիճանի ցավալի ու պախարակելի» երևույթ է համարում այն անգիտությունը, որ փոխադարձաբար դրսևորում են հայերն ու վրացիները միմյանց մշակութային ու պատմության իմացության գործում։ Եվ Թումանյանը վիթխարի աշխատանք ծավալեց, որպեսզի հայերն ու վրացիները ավելի լավ ճանաչեն ու հարգեն իրար։

Ժողովուրդների մեծությունը բացահայտվում է նաև իրենց հոգևոր ուշակությի մեջ, իսկ ամեն մի ժողովրդի մեծության առաջին նշանը Թումանյանը համարում էր դրականությունը. «Իսկ Վրաստանը,—ասում էր նա,—թե՛ հնում, թե՛ նոր ժամանակներում միշտ եղել է հառաջագիմ ժողովուրդների շարքում» (5, 445)։ Դրականությունը նա համարում էր այն ասպարեզը, ուր յուրաքանչյուր ազգ ներկայանում է իր ուրույն հոգևորանությամբ, ազգային առանձնահատկություններով։

Մտահոգված հայ և վրաց ժողովուրդների միջև դրական-մշակութային ափսոսանքի կապեր ստեղծելու խնդրով Թումանյանը 1914 թ. Հայ գրողների կովկասյան ընկերության երկույթներում կազմակերպեց դասախոսությունների շարք վրաց գրականության մասին։ Մ. Մուկուկիձին միայն մի դասախոսություն ընթացրեց ներկայացրեց XIX և XX դդ. վրաց գրականության զարգացման օրինաչափությունները, կանգ առավ վրաց գրականության պատմության տարբեր փուլերի, վրացական վերածնության հարցերի, բազմաթիվ վրաց գրողների ստեղծագործության վերլուծության վրա։ Հայոց բարեգործական ընկերության դահլիճում հավաքված հայ մտավորականությունը, ողջունելով Մուկուկիձին, ողջունում էր վրաց ժողովրդին ու նրա գրականությունը։ Երկույթը բացեց Թիֆլիսի ժողովրդական համալսարանի վրացական բաժնի 50 հոգուց բաղկացած երգչախումբը Հովսեփ Գոճիաշվիլու ղեկավարությամբ²¹։

Վրաց գրականությանն էր նվիրված նաև 1916 թ. դեկտեմբերի 16-ի երեկոյն Հայ գրողների կովկասյան ընկերության հինգ թիմերում, ուր զեկուցումով հանդես եկավ վրացի իշխան, գրական-հասարակական գործիչ, խմբագիր Իլյա Նակաշիձեն։ Նույն թվականի նոյեմբերի 19-ին Հայ գրողների

²⁰ Նույն տեղում, 26 դեկտեմբերի 1919։

²¹ «Հորիզոն» (լրագիր), Թիֆլիս, 9 մարտի 1914։

կովկասյան ընկերության վարչության կիրականության հերթական նիստում Թումանյանը հայտնում է, որ վրացի գրող Իլյա Նակաշիձեն համաձայնել է ևս երկու դասախոսություն կարդալ վրաց գրականության մասին: 'Ինկտեմբերի 16-ի երեկոյի ընթացքում ընկերության նախագահը բանախոսին նվիրեց Բրյուսովի կազմած «Поэзия Армении» ժողովածուն, ուր, ինչպես նկատեց Թումանյանը, «ամփոփված են մեր ժողովրդի հոգին և մեր ամենաթանկ զգացմունքները» (4, 466): Նակաշիձեն իր զեկուցման մեջ կանգ առավ գրական ազդեցությունների հարցի վրա, ընդհանուր գծերով ներկայացրեց վրաց գրականության յուրահատկությունները, խոսելով հիմնականում Ալ. Ճավճավաձեի, Ն. Բարաթշվիլու, Դ. Գոնչաձեի, Ա. Մերեթելու և Վ. Փշավելայի ստեղծագործությունների մասին²²: Ս. Կակաբիձեն նույնպես ցանկություն էր հայտնել դասախոսություն կարդալ ընկերության երեկոյաներից մեկում: Սակայն Շոթա Ռուսթավելու «Հնձենավորի» մասին նրա զեկուցումը չկայացավ²³:

Թումանյանի ձեռնարկած դասախոսությունների շնորհիվ Ի. Նակաշիձեի զեկուցման օրը, դեկտեմբերի 16-ին, վրաց գրողներից շատերը որոշեցին տարբեր առիթներով ելույթներ ունենալ Հայ գրողների կովկասյան ընկերության երեկոյաներում և իրենց հերթին խնդրեցին ընկերության վարչությանը գրաքննադատներ ու գրողներ տրամադրել վրաց հասարակության առջև հայ գրականության մասին դասախոսություններ կարդալու համար:

Առհասարակ Թումանյանի կազմակերպած գրեթե ոչ մի միջոցառում չէր անցնում առանց վրաց գրողների ու մտավորականների մասնակցության: Թումանյանի շուրջն էին համախմբված վրաց գրողների միության նախագահ Կոտե Մակաշվիլին, Իլյա Նակաշիձեն, Շավա Դադիանին, Գալակտիոն Տաբիձեն, Տիցիան Տաբիձեն, Գրիգոր Ռոբակիձեն, Իոսեբ Իմեդաշվիլին, Իոսեբ Գրիշաշվիլին, քանդակագործ Յակոբ Նիկոլաձեն, կոմպոզիտոր Դ. Ակակաշվիլին, Շիո Արազվիսպիրեյին, Վասիլի Բարնովը, Վալերի Գաբրիելաշվիլին, Պաոլո Յաշվիլին:

Հաճախ գրական ասուլիսները Թումանյանը ձեռնարկում էր հենց իր տանը, որոնց ոչ հազվադեպ ներկա են գտնվել վրաց գրողներ և հասարակական գործիչներ: Թումանյանը իր հերթին աշխատում էր մասնակցել վրաց գրականության բոլոր նշանավոր տոներին ու հանդիսություններին: Ինչպես հավաստում է Տիցիան Տաբիձեն, «մեր ոչ մի նախաձեռնությունը առանց նրա (Հովհաննես Թումանյանի—Ս. Հ.) մասնակցության չէր անցնում»²⁴, Վրաստանի ամեն մի տոնը կենդանի արձագանք էր գտնում հայ իրականության մեջ. «Վրացի գրողի հաղթանակի տոնը ուրախության օր է հայ գրողի համար» (5, 445):

Այս առումով հիշատակության արժանի է Իլյա Ճավճավաձեի մահաբանի բացումը (1913 թ. մայիս), Ա. Մերեթելու հոգեհանգիստը (1915 թ. փետրվար), Վասիլի Բարնովի գրական գործունեության 30-ամյակը (1919 թ. նոյեմբեր), վրաց գրականության և գեղարվեստի տոնը (1920 թ. մայիսի 9), վրաց գրողների «խմբիկոն» ակումբի բացումը (1919 թ. դեկտեմբերի 28), Ի. Գրիշաշվիլու կազմակերպած երեկոն (1919 թ. մարտի 24), վրաց գրող, վիպասան Կլդիաշվիլու գրական գործունեության 25-ամյակը (1920 թ. փետրվարի 15) և այլն:

1919 թ. դեկտեմբերի 28-ին «խմբիկոն» ակումբի բացմանը հաջորդող խնջույքում մեծարժան խոսքերը հիմնականում ուղղվեցին դերասանուհի Նինա Չխեիձեի և Հովհաննես Թումանյանի հասցեին: Իր պատասխան խոսքը Թումանյանը արտասանեց տեղում հորինած էքսպրոմտ մի բանաստեղծությամբ՝ նվիրված վրաց գրողների ընկերությանը, որն անմիջապես վրացիներին թարգմանաբար ներկայացրեց Պ. Յաշվիլին²⁵:

²² «Բաբու», Բաքու, 21 դեկտեմբերի 1916, նաև՝ «Հորիզոն», 13 դեկտեմբերի 1916:

²³ «Հորիզոն», 22 հունվարի 1917:

²⁴ Թումանյանը ժամանակակիցների հուշերում. Երևան, 1969, էջ 729:

²⁵ «Слово». Тифлис, 30 декабря 1919.

Ամենուրեք վրաց ժողովուրդն ու գրողները Թումանյանին ընդունում էին սիրով ու ակնածանքով: Արտակարգ ջերմ էր Ի. Գրիշաշվիլու կազմակերպած 1919 թ. մարտի 24-ի երեկոյն պետական թատրոնում, ուր Պ. Յաշվիլին ողջույնի խոսք է հղում Թումանյանին, որից հետո «Թումանյանի պատվին տեղի է ունենում հանդիսավոր ցույց. հասարակությունը հոտնկայս, որոտ-ընդոտ ու երկարատև ծափերով դիմավորեց օթյակում երևացած Հովհաննես Թումանյանին»²⁶:

Վրաց գրողների միության նախաձեռնությամբ 1919 թ. փետրվարի 15-ին Թիֆլիսում և Քութայիսում հանդիսավոր տոնվում էր վրաց գրող, վիպասան Դավիթ Կլեյաշվիլու գրական գործունեության 25-ամյակը²⁷: Թումանյանը Հայ գրողների ընկերության անունից ողջույնի խոսք է հղում հորեկյարին: Նա վրաց արձակագրին անվանում է իր ժողովրդի արժանավոր որդի, այն ընտրյալներից մեկը, որը մայրենի լեզվի ու գրականության հալածանքի օրերում բարձր է պահել վրաց ժողովրդի հոգևոր կարողության գրողը. «Ես, որպես Հայ գրողների ընկերության նախագահ՝ թե՛ ընկերության կողմից և թե՛ իմ կողմից ցնծագին ողջունում եմ և լիասիրտ մաղթում եմ, որ ավելի երկար ու ավելի բարձր թնդացնեք վրաց ազնիվ-յեղի սրտի խոսքը» (5, 4-6): 1919 թ. ապրիլի 2-ին, Տիցիան Տաբիձեի երեկոյին Թումանյանը կարդաց «նյութի վրաստանի բանաստեղծներին» ստեղծագործությունը²⁸:

1920 թ. Վրաց գրողների միության երկրորդ կոնֆերանսում ի Թիֆլիս այլ միջոցառումների որոշվում է մայիսի 7-ը հայտարարել «պոեզիայի օր Թիֆլիսում» և Վրաստանի բոլոր նահանգներում²⁹: Նույն թվականի ապրիլի 27-ին կայանում է Հայ գրողների ընկերության ժողովը Թումանյանի նախագահությամբ և հայրենակցական միությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկվում է Վրաստանի «Պոեզիայի օրվան» հայ մշակութային շրջանների մասնակցության հարցը: Ընտրվում է հատուկ հանձնաժողով, որին առաջարկվում է խորհրդակցություն հրավիրել Թիֆլիսի հայ մշակութային բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ տոնը պատշաճ դիմավորելու համար: Նրանք, ովքեր ողջույնի խոսք ասելու ցանկություն կունենային, պետք է ցուցակագրվեին ապրիլի 27-ին ստեղծված հատուկ հանձնաժողովի նախագահ Հովհաննես Թումանյանի մոտ: «Ընդունում եմ,—գրում է Տիցիան Տաբիձեն,—այն ժամանակ Հովհաննեսը ամեն օր գայիս էր մեղ մոտ, հետաքրքրվում էր ամեն մի մանրամասնությամբ»³⁰: Վատ եղանակի պատճառով «Պոեզիայի օրվա» տոնակատարությունը հետաձգվում է մայիսի 9-ին, ցերեկվա ժամը 1-ին Ալեքսանդրյան այգում՝ Վրաց գրականության ու գեղարվեստի հանդիսավոր տոն» անվան տակ: Ինչպես միշտ, այս անգամ էլ Թումանյանն է Թիֆլիսի հայ կուլտուրական հասարակայնությանը կողմնում ներկա գտնվել վրացիների ազգային մեծ հանդիսություն: «Եվ ահա,—գրում է Թումանյանը իր «Գնանք» հոդվածում,—երբ վրացին տոնում է իր ոգու տոնը, իր ազգային բանաստեղծության օրը, անկարելի է, որ նայր լնտեղ չլինի: Եվ էնտեղ կլինի ամենից առաջ:

Գնանք էդ գեղեցիկ օրը մեր եղբայր ժողովրդին այցելելու և նրա պայծառ հանճարը հարգելու» (4, 425):

Սակայն վրաց պոեզիայի տոնը 1920 թ. այդպես էլ տեղի չի ունենում: Պատճառներից մեկն այն էր, որ շարադրված է Տիցիան Տաբիձեի և Պաուլո Յաշվիլու Թումանյանին ուղղած նամակում: Երկու բանաստեղծները վրաց գրողների միության խորհրդի անունից ցավ ու ափսոսանք են հայտնում, որ ստիպված են հետաձգել ազգային այդ մեծ հանդիսությունը, բանի որ վրաց ողջ հասարակայնությունը սգում է ռազմաճակատում զոհված ութ զինվորների մահը: «Մեծարգո և թանկագին Հովհաննես, Վրաց գրողների միությունը—

²⁶ «Աշխատավոր», 26 մարտի 1919:

²⁷ Նույն տեղում, 11, 15 փետրվարի 1920:

²⁸ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 229:

²⁹ «Слово», 21 апреля 1920.

³⁰ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 229:

նր ցավում է, որ վրացական պոեզիայի տոնը հարկադրված հետաձգվում է։ Հիմնական պատճառն այն է, որ վրաց հասարակությունը վշտացած է պոլիտիկան և արդագոսյան ռազմաճակատներում զոհված ութ հերոսների թաղման արարողությամբ։ Սուգը, բնականաբար, խանգարում է մեզ պատշաճորեն տոնել Երևանի օրը»³¹։

Նույն նամակով Թումանյանին հայտնում են, որ վրաց գրողների խորհրդակցությունը որոշել է հայ և վրաց հասարակական միությունների ուժերով կազմակերպել երեկո՝ նվիրված հայ-վրացական մշակութային առնչություններին, «...որի ժամանակ, մենք հուսով ենք, ցայտունորեն կդրսևորվեն սիրո և բարեկամության այն զգացմունքները, որոնցով լցվել են մեր սրտերը»³²։

1921 թ. մայիսի 18-ին Թումանյանը վրաց գրողների միության նախագահից՝ Վ. Կոտետաշվիլուց ստանում է հրավեր՝ մասնակցելու վրաց գրականության և լուսավորության տարածման, կազմակերպական հարցերի քննարկման և գործունեության ծրագրի վերանայման աշխատանքներին նվիրված համագումարին։

Թումանյանը մեծ դեր էր հատկացնում նաև թարգմանական գրականությանը։ 1920 թ. ծրագրել էր հրատարակել վրաց գրողների ժողովածու հայերեն և հայ գրողների ժողովածու՝ վրացերեն։ Աշխատանքները ընթանում էին Իոսեբ Գրիշաշվիլու և Սիկո Փաշալիշվիլու ղեկավարությամբ։

Երբ Հայաստանում և Վրաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, Վրաստանի գրողների միությունը, Թումանյանին համարելով «ընդհանուր» բանաստեղծ հայերի ու վրացիների համար, նրան բացառիկ պատվի արժանացրեց՝ նշանակելով թոշակ։ Իր շնորհակալական պատասխանում Թումանյանը գրեց. «Վրացուն պատահելն ու ծանոթանալն է բանը—իսկ նրան սիրելուց հեշտ բան ես գրեթե չգիտեմ... Իմ արածի հանդեպ իմ եղբայր վրացի գրողների արածը ես գտնում եմ էնքան շուտով մի պատասխան, ինչքան շուտով մի պատասխանի ընդունակ է վրացին» (5, 463)։

Թումանյանը Վրաստանը սիրում էր մեծ ու խոր սիրով, բարձր գնահատելով վրացու անկեղծ ու բարի, կենսուրախ բնավորությունը («համակ շնորհ ու սրբություն»)։ Յուրաքանչյուր վրացու անվանում էր պոետ, իսկ վրաց բանաստեղծին՝ կրկնակի պոետ. «Բանաստեղծական բնավորությունն այնքան է հատկանշական վրացուն, որ ամեն վրացի ինձ թվում է բանաստեղծ։ Սա վրացուն դարձնում է գրավիչ նույնիսկ իր թշնամիների համար,—գրում է Թումանյանը իր «Վրաց բանաստեղծությունը» հոդվածում» (4, 424)։ Այդ բանաստեղծական ոգուն, գեղեցկուհիների ու քեֆ անողների հայրենիքին Թումանյանը ձոնեց մի շարք բանաստեղծություններ՝ «Վրաստանի համար», «Վրաստանի ոգին», «Նվիր Վրաստանի բանաստեղծներին» և այլն։ Վրացիներին նա համարում էր այն ժողովուրդներից մեկը, որոնք իրենց դարավոր մաքառումների, վսեմ ձգտումների և սրտի պարզության համար արժանի են լավագույն ապագայի։ Եվ բանաստեղծը չէր կարող անտարբեք անցնել Վրաստանի թե՛ ուրախության ու թե՛ ցավի կողքով։ 1920 թ. գարնան առաջին օրերին Վրաստանում տեղի ունեցավ երկրաշարժ, որն իր հետ տարավ մարդկային զոհեր։ Տարերային աղետից տուժել էր հատկապես Գորիի շրջանը։ Թումանյանը գիտեր և վստահ էր, որ հայր առաջինը պետք է ձեռք մեկնի դժբախտության մեջ գտնվող եղբորը։ Ինքը՝ հայ ժողովուրդը կքած էր մեծ ու անփարատ վշտի տակ։ Դեռ թարմ էր մեծ եղեռնի կսկիծն ու ցավը, դեռ անձխիթար էր հայ որբերի ու գաղթականների վիճակը։ Թումանյանն էլ զբաղված էր հայ հայրենակցական միությունների միության, պատերազմից հայ ժողովրդի կրած վնասները քննող հանձնաժողովի, գրողների միության, հայ արվեստի տան, հայ որբերի ու գաղթականների հանդանակի կոմիտեի գործերով, քանի որ միաժամանակ նախագահում էր այդ բոլոր հաստատություններում։ Բայց Թումանյանը չէր կարող «հայոց վշտի մեծ ծովի մեջ»

³¹ Ե. Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հովհաննես Թումանյանի ֆոնդ, № 460 (1. ց.)։

³² Նույն տեղում։

շտեսնել դրացու, եղբոր ցավը: Եվ բանաստեղծը վաճառքի է հանում այն միակ բանը, ինչը կարող էր վաճառել: Նա վաճառում է իր գրքերի հրատարակության իրավունքը և ստացված ամբողջ գումարից 10 000 ռուբլին հատկացնում է հայ որբերին, 10 000-ը՝ հայ գաղթականներին և 10 000-ն էլ՝ Վրաստանի երկրաշարժից տուժածներին³³: Այս մասին հաղորդումը տպագրվել էր ժամանակի լրագրերում: Սույն նվիրատվության մասին մի փոքր այլ բովանդակությամբ հուշեր ունեն բանաստեղծի դուստրերը՝ Նվարդ և Աշխեն Թումանյանները: Նրանք պատմում են, որ այդ 30 000 ռուբլին Թումանյանը ստացել է Գորիի երկրաշարժի օրերին: Նրանց վկայությամբ ես գումարը բաժանվել է երեք մասի՝ «10 000-ը երկրաշարժից վնասված երեխաներին նվիրեց և այդ առթիվ մի հոգված դրեց ու կոչ արեց բոլորին նվիրարկություններ անելու, օգնելու վնասված ժողովրդին: 10 000-ը Ռուսաստանի սովյալներին նվիրեց, մի հոգված էլ հետը, իսկ 10 000-ը՝ վանի գաղթականությանը»³⁴: Այս հաղորդման մեջ ավելանում է Ռուսաստանի սովյալներին արված նվիրատվությունը, որը նույնպես շատ հավանական է թվում: Այդ գումարը Թումանյանը պիտի հանձնե՞ր մարտի 20-ին՝ վրաց ազնվականների ակումբում: Նրա վատառողջ լինելու պատճառով վրաց գրողների հասարակայնությանը ներկայանում է բանաստեղծի ավագ դուստրը՝ Աշխեն Թումանյանը:

Իր այս վարմունքով Թումանյանը նախաձեռնում էր մի մեծ գործի, որին կամենում էր մասնակից դարձնել ոչ միայն մեծահասակներին, այլև բոլոր երեխաներին, ամբողջ հայ ժողովրդին: Այդ մասին է հավաստում վերջերս Թումանյանի ընտանեկան արխիվում հայտնաբերված բանաստեղծի ինքնագիր մի պատառիկ, ուր մանուկների սիրելի գրողը կոչ է անում երեխաներին էլ մասնակից դարձնել Վրաստանի երկրաշարժից տուժած որբերին օգնելու, նաև բարոյական նեցուկ լինելու գործին. «Եվ էս պարտքի գիտակցությունն էլ պիտի ներշնչենք մեր երեխաներին ու էսպես էլ սովորեցնենք»:

Էսպես մտածելով մենք ամենքս էսօր պետք է մեր օգնության ձեռքերը միահամուռ ուղղենք դեպի Վրաստանի երկրաշարժից աղետյալների կողմը և մեր երեխաներն էլ մեզ հետ միասին»³⁵— գրում է Թումանյանը: Հավանաբար սա սեպհիր պատառիկն է այն հոգվածի կամ կոչի, որի մասին իր հուշերում հիշում է Նվարդ Թումանյանը:

Պատմությունը այս էլ որբերող անգամ ապացուցեց Թումանյանի մըտքերի խորությունն ու իմաստությունը: Այսօր, 70-ամյա հեռավորությունից մեզ են հասնում Թումանյանի խոսքերը, որոնք կարծես ասված են մեր օրերի համար. «Այո, մեղ հասած դժբախտությունը վեր եղավ մեր ուժերից ու կարողություններից: Սակայն էս էլ կանցնի: Առաջին անգամը չի, որ հայ ժողովուրդը էս տեսակ աղետ է տեսնում: Էլի է տեսել ու նորից ոտի կանգնել, նորից վերաշինելու և ստեղծագործելու համար» (5, 444):

Թումանյանը պայծառ հայացքով էր նայում բոլոր ժողովուրդների ապագային, իսկ հայի ու վրացու բարեկամությանը հավատում էր անվերապահ, այդ կապն ու միությունը համարելով անկործանելի և հավերժ: Այսօր էլ խիստ արդիական են հնչում հայ-վրացական հարաբերությունների մասին նրա մարգարեական խոսքերը, երկու ժողովուրդներին տված պատվիրանները: Ապացուցը նորօրյա մեր կյանքն է, վրացու գրչի տակից դուրս եկած հետևյալ խոսքերը. «Ոչ միայն ողբերգության ժամին, այլև ի սկզբանե միասին ենք 'դել': Մեր սերունդները պիտի համոզված լինեն՝ առանց մեկմեկու չենք կարող, այն չենք»³⁶:

Եվ այսօր հատուկ իմաստ են ստանում Թումանյանի ներշնչված խոսքերը. «Հավատացած եղեք, որ ամենալավ վրացու հետ ես կմրցեմ դեպի Վրաստանը տաժած իմ անկեղծ ու խոր սիրով»³⁷:

³³ «Աշխատավոր», Թիֆլիս, 9 մարտի 1920:

³⁴ Նվարդ Թումանյան. Հուշեր և դրույցներ. Երևան, 1987, էջ 227:

³⁵ Թումանյանի թանգարան, Նոր նյութեր, թղթապանակ 30:

³⁶ «Գրական թերթ», 27 հունվարի 1989:

³⁷ «Եօրնճա», 23 ноябрь 1919.

ТУМАНЯН И АРМЯНО-ГРУЗИНСКАЯ ДРУЖБА

С. Г. ОВАНЕСЯН

Резюме

Великого интернационалиста Ованеса Туманяна с Грузией связывали тесные узы. Во многих своих статьях Туманян анализирует политическую жизнь своего времени и прослеживает историю народов Закавказья. Писатель подчеркивает большую близость исторических судеб армянского и грузинского народов, единство их национальных и общественных интересов. Он утверждает, что на протяжении веков лучшие представители грузинского народа поддерживали Армению, а армяне—Грузию. Упомянув об имевших место столкновениях между соседними народами, Туманян справедливо считал, что основная вина лежит на правящих кругах, интересы которых нередко шли вразрез с интересами их же народов и которые играли на изменчивых чувствах толпы. Туманян тщательно собирал различные документальные материалы, имеющие отношение к истории грузинского народа, переводил их, проводил филологические исследования, организовывал литературно-музыкальные вечера, принимал личное участие во всех мероприятиях культурной жизни грузинского народа.